FRIEDRICH EBERT STIFTUNG

ՍՆՆԴԻ ԱՌԱՔԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ուսումնասիրության արդյունքներ

ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2024

9

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա

Բովանդակություն

Ողջույնի խոսք

ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը մասնակցել է «Մեդիա կենտրոն»-ի կողմից կազմակերպված քննարկմանը

«Մննդի առաքիչների աշխատանքային պայմանները» ուսումնասիրության արդյունքների ներկայացում և քննարկում

Արիմիութենական երիտասարդ առաջնորդների և ակտիվիստների համար սեմինար

Լեռնային Ղարաբաղից տեղահանված փախստականների ճգնաժամի համատեքստում ոչ ֆորմալ զբաղվածության կանխումը և ֆորմալ զբաղվածությանը անցնելու խթանումը

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահը հանդիպել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց հետ

Գյումրիի ԲԿ-ում տեղի ունեցավ հանդիպում Շիրակի մարզի խոշոր բժշկական կենտրոնների ղեկավար կազմի, բուժաշխատողների և արհմիությունների անդամների հետ

Սեմինավարների պատրաստման դասընթաց

Բարի գալուստ,
«Արիմիութենական անցուդարձ» ամսագիր

«Արիմիութենական անցուդարձ» ամսագիրը հանդիսանում է Հայաստանում արիմիութենական առաջին էլեկտրոնային ամսագիրը, որի նպատակն է տարածել և հանրահռչակել Հայաստանի արիմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կողմից յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարած աշխատանքների մասին տեղեկատվությունը: Արիմիութենական առօրյան հարուստ է բազմազան միջոցառումներով, ծրագրերով, որոնք ուղղված են աշխատողների իրազեկմանը, աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական, տնտեսական, մասնագիտական իրավունքների ներկայացմանը, պաշտպանմանը և առաջ մղմանը:

Մենք վստահ ենք՝ այսօր ժամանակակից աշխարհում ամենազորեղ զենքը գիտելիքն է և տեղեկտավության տարածումը:

Հայաստանի արիմիությունների
կոնֆեդերացիայի աշխատակազմ

ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանը մասնակցել է «Մեդիա կենտրոն»-ի կողմից կազմակերպված քննարկմանը



ՀՀ Կառավարությունը 2024 թվականի օգոստոսի 29-ի նիստում հավանություն է տվել «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերին: Ներկայացվող փոփոխություններով նախատեսվում է ՀՀ-ում ներդնել աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգ:

Սեպտեմբերի 12-ին «Մեդիա կենտրոն»-ում տեղի է ունեցել «Աշխատանքային պայմանագրերի թվայնացում. աշխատանքային խախտումների իրական լուծո՞ւմ, թե՞ կոսմետիկ բարեփոխում» թեմայով քննարկում: Քննարկման բանախոսներն էին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Վահագն Գրիգորյանը և Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը խոսել է, թե ինչպես առաջարկվող փոփոխությունները կարող են ազդել աշխատողների վրա և ներկայացրել է համակարգի ներդրման հնարավոր դրական և բացասական հետևանքները:

Տեսանյութը կարող եք դիտել՝ հետևելով հղմանը
https://www.youtube.com/watch?v=TvcmIAPWe-E

«Սննդի առաքիչների աշխատանքային պայմանները» ուսումնասիրության արդյունքների ներկայացում և քննարկում

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանում Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի համագործակցության շրջանակում ս.թ. սեպտեմբերի 13-ին ներկայացվեց «Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ» (APR GROUP) հասարակական կազմակերպության կողմից իրականացված «Սննդի առաքիչների աշխատանքային պայմանները» ուսումնասիրությունը:

Սպասարկման ոլորտը Հայաստանի Հանրապետությունում սրընթաց զարգացում է ապրում: Դրան զուգահեռ աճում է ոլորտում ներգրավված անձանց թիվը, որը ներառում է ամենատարբեր տարիքի, սեռի, սոցիալական կարգավիճակի անձանց, ինչպես նաև աշխատանքային միգրացիայի հետևանքով Հայաստան ժամանած օտարերկրացիների:

Աշխատողների մեծ մասը չունեն աշխատանքային տարրական իրավունքների մասին գիտելիքներ և, հետևաբար, չեն կարողանում պաշտպանել դրանք: Աշխատակիցների հիմնական խնդիրներն են աշխատանքի վտանգավոր պայմանները, անարդար եկամուտները և կազմակերպչական տարբեր խոչընդոտները: Ինչպե՞ս են կանոնակարգվում աշխատանքային հարաբերությունները, պայմանները, որքանո՞վ են խախտվում աշխատանքային իրավունքները և ինչպե՞ս են դրանք պաշտպանվում, արդյո՞ք իրազեկ են իրենց իրավունքներից. այս և աշխատանքային իրավահարաբերություններին վերաբերող այլ հարցեր պարզելու նպատակով իրականացվել է «Սննդի առաքիչների աշխատանքային պայմանները» ուսումնասիրությունը՝ սննդի առաքիչների աշխատանքային գործունեություն իրականացնելու հետ կապված խնդիրները բացահայտելու, կարիքները մասնակի գնահատելու, աշխատաշուկայում արդար պայմաններ ստեղծելու անհրաժեշտ գործիքակազմերը վեր հանելու համար:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ ԱԺ Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանը, ՀՀ ԱՍՀՆ նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը, ՀՀ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի, ԱՍՀՆ նախարարության և Միասանական սոցիալական ծառայության ներկայացուցիչներ և ոլորտով հետաքրքրված հյուրեր:
Հայաստանի արհիմությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը, ողջունելով հյուրերին և կարևորելով ուսումնասիրության մերօրյա արդիականությունը, ընդգծեց, որ սա առաջին ամբողջական հետազոտությունն է , որն իրականցվել է պարզելու, թե սննդի առաքմամբ զբաղվող աշխատողները ինչ աշխատանքային պայմաններում են աշխատում, ինչքանով են նրանք տեղյակ իրենց իսկ աշխատանքային իրավունքներից և ինչքանով են այդ իրավունքները խախտվում:

ՀՀ ԱԺ Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանը կարևորել է աշխատողների աշխատանքային իրավունքների հանդեպ հետաքրքրվածության բարձրացում, և նշել է, որ այս հետազոտությունը և այնտեղ առկա եզրակացություններն ու առաջարկությունները վստահորեն հիմք են հանդիսանալու ոլորտի կարգավորմանն ուղղված հետագա գործընթացների համար, քանի որ մեր պետությունը կարևորում է ոչ թե աշխատանք գտնելը, այլ արժանապատիվ աշխատանք ունենալը:
ՀՀ ԱՍՀՆ նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանն իր խոսքում ընդգծեց նման հետազորությունների կարևորությունը, քանի որ ներկայումս մշակվող Զբաղվածության քաղաքականության մշակման հարցում դրանք հանդիսանում են հավելյալ գործոններ այս կամ այն ոլորտին այլ տեսանկյունից նայելու համար:

Արմենիա հեռուստաընկերության «Ժամը» լրատվականի թողարկման ժամանակ անդրադարձ է կատարվել հետազոտության արդյունքներին:

Ուսումնասիրությունն ամբողջությամբ կարող եք տեսնել՝ հետևելով հղմանը
https://shorturl.at/UDiwu

Արմենիա հեռուստաընկերության «Ժամը» լրատվականի թողարկման անդրադարձը կարող եք դիտել՝ հետևելով հղմանը
https://www.youtube.com/watch?v=uP_ITBFNi7Q

Արհմիութենական երիտասարդ առաջնորդների և ակտիվիստների համար սեմինար

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և «Սոլիդարիթի Սենթր» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության հետ համագործակցության շրջանակներում 2024 թվականի սեպտեմբերի 20-ից սեպտեմբերի 22-ը կազմակերպվել է սեմինար արհմիութենական երիտասարդ առաջնորդների և ակտիվիստների համար:

Սեմինարը մեկնարկեց արհմիութենական աշխատանքներում երիտասադրների ներգարվվածության շուրջ քննարկումներով:

Սեմինարի ընթացքում երիտասարդ արհմիութենականները ձեռք բերեցին նաև կոնֆլիկների կառավարման և ճգնաժամային իրավիճակների կառավարման վերաբերյալ գիտելիքներ :

Լեռնային Ղարաբաղից տեղահանված փախստականների ճգնաժամի համատեքստում ոչ ֆորմալ զբաղվածության կանխումը և ֆորմալ զբաղվածությանը անցնելու խթանումը

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը սեպտեմբերի 25-ին մասնակցեց «Լեռնային Ղարաբաղից տեղահանված փախստականների ճգնաժամի համատեքստում ոչ ֆորմալ զբաղվածության կանխումը և ֆորմալ զբաղվածությանը անցնելու խթանումը» ծրագրի մեկնարկն ազդարարող քննարկումներին:

Ծրագրի մեկնարկին ներկա էին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը, Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Վահագն Համբարձումյանը, Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Ֆրանսուազ Ժակոբը, ԱՄԿ ֆորմալացման գործողությունների ծրագրի տնօրեն Ֆրեդերիկ Լապեյրը, Զբաղվածության հարցերով ավագ մասնագետ Կազուտոշի Չատանին և ԱՄԿ ազգային համակարգող Նունե Հովհաննիսյանը: Ծրագիրն իրականացվում է Աշխատանքի միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակի նախաձեռնությամբ:

Պանելային քննարկման մասնակիցները խոսեցին ոչ ֆորմալ զբաղվածության կանխարգելման, ֆորմալ զբաղվածության հնարավոր խրախուսման և այս ամենի համատեքստում սոցիալական գործընկերության կարևորության մասին:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը ընդգծեց բոլոր այն մարտահրավերները, որոնց բախվում ենք, նշելով որ դրանց լուծման ուղիները կրթությունից և մշակույթից մինչև իրավակարգավորումների և իրավապրակտիկայի ճիշտ կիրառումն են:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահը հանդիպել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց հետ

2024 թվականի սեպտեմբերի 26-ին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը Մարտունի քաղաքում հանդիպում է ունեցել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց հետ, որտեղ քննարկվել է աշխատաշուկայում ինտեգրման խնդիրները:

Հանդիպումը կազմակերպվել էր Ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության կողմից:

Գյումրիի ԲԿ-ում տեղի ունեցավ հանդիպում Շիրակի մարզի խոշոր բժշկական կենտրոնների ղեկավար կազմի, բուժաշխատողների և արհմիությունների անդամների հետ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը, Հայաստանի առողջապահության աշխատողների ճյուղային հանրապետական միության նախագահ Շուշան Պետրոսյանը 2024 թվականի սեպտեմբերի 27-ին Գյումրիի ԲԿ-ում հանդիպում են ունեցել Շիրակի մարզի խոշոր բժշկական կենտրոնների ղեկավար կազմի, բուժաշխատողների և արհմիությունների անդամների հետ:

Հանդիպման ընթացքում խոսվեց արհմիությունների դերի և գործունեության մասին, քննարկվեց գործատու-աշխատող հարաբերություններում առաջացող կոնֆլիկտների երկկողմանի շահավետ լուծման տարբերակներ:

Հանդիպումն անցավ բուռն քննարկումներով, ձեռք բերվեց համաձայնություն ավելի հաճախ կազմակերպել նմանօրինակ հանդիպումներ մարզերի տարբեր բուժհաստատություններում:

Սեմինավարների պատրաստման դասընթաց

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան «Սոլիդարիթի Սենթր» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության հետ համագործակցության շրջանակներում 2024 թվականի սեպտեմբերի 27-ից սեպտեմբերի 29-ը կազմակերպել է սեմինարվարների պատրաստման 2-րդ դասընթացը՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի սեմինավարների ցանկը լրացնելու նպատակով։

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա
Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3
Հեռ.՝ +37410 583682
www.hamk.am
hamk@hamk.am